

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլին բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դր, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս: Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Մեր բարեկամներէն մէկը երէկ հետեւեալ դէպքը պատմեց մեզ, զաւրի սիրաք :

« Կիւրակէ օրը առաւօտուն Գում գալուի Մայրեկեղեցւոյ Ս. Խաչի կողմը յատկապէս շքեղ պատրաստութիւններ եղեր են, մեծ Մեղքիսեղ ազայի նորածին թողին մկրտութեան հանդիսին համար : Այս միջոցին արհեստաւորի մը նորածին օրդին կնքահօրն ու յոյն դայեակի մը հետ յիշեալ եկեղեցին մկրտութեան համար սովորական եղած Կնքեան կողմը տարուեր է, սակայն գոց գանուերէ դուռը եւ ժամակոյ մը պատահելով իրենց խնայուցեր է թէ նոյն օրը Ս. Խաչի կողմը ուրիշի մը մկրտութեան համար բացուած ու պատրաստուած ըլլալով իրենք ալ կրնան հոն երթալ : Ասոր վրայ ազան հոն կտարուի, և արդէն պատրաստուած տեղը կգրուի :

« Մեղքիսեղ ազայի թողուտակաւին եկեղեցի բերուած չէ եղեր : Եկեղեցւոյն Տ. Սարգիս քահանայն վրայ հասնելով, կարգելէ զանոնք և կհրամայէ որ՝ ազան նոյն տեղէն վեր

ցունեն : Մանք կպատասխանեն թէ ժամակոյ մը աղբարարութեամբ հոն եկած են. իսկ յոյն դայեակը զայրանալով կրսէ թէ ինչ պատճառաւ այս ազան հոն չընդունուիր, և ինչ տարբերութիւն կայ այս ու դալիք տղայ մէջ եկեղեցւոյն առջև : Սակայն քահանայն դարձեալ կյամաւի և կտուրպէ որ ելնեն : Ուտտի խեղճերը կհարկադրին ձգել այն տեղը ու Եէնիգաւուի եկեղեցին տանիլ երախայն :

« Այս դէպքը լսելով եկեղեցւոյն քահանաներէն ոմանք, կաշխատին ետ դարձունել զբնոնք և ներում ինդրել, բայց անհնար կըլլայ : Տղան Եէնիգաւուի եկեղեցին կմկրտուի :

« Մեղքիսեղ ազան և բոլոր լսողներն ալ զաւ յայաներ են այս անտեղութեան վրայ » :

Մեր բարեկամին այս պատմութիւնը եթէ բոլոր պարագաներովը ստոյգ է, Տ. Սարգիս քահանայն թեթեւ պատասխանատուութեան տակ մնացած չըլլար : Ժողովուրդը եկեղեցւոյն մէջ հաւատարմէ՞. եկեղեցւոյն մէջ աղքատի, հարուստի, իշխանաւորի, և այլն, խտրութիւն ընելը խոշոր անտեղութիւն մը չէ՞ :

Մանկ Գ. Արարեան

Երէկ մեր օրագրոյն բաժանորդուներեանք այս անունով գեռափթիթ օրիորդիկ մը = Հեռաքրքրութիւն, ընելով ինձոցանք որ ասի 1868 ապրիլ ամսագլխէն Մէզպուրեան Մեծ. Մը կըրտիչ աղայի Պոլսոյ Հիսարտիպի վարժարանը մտնելով ճիշդ հինգ ամսական հասակին մէջ, մինչև այսօր ուսած է քաղ ընթերցմունք, քրիստոնէական մանր ուսմունք, համառօտ քերականութիւն բացերն աւարտած, թուադիտութիւն և դրավարժութիւն: Ժամանակէ մ'ի վեր ալ լրագիր կարգալու սէր ձգած ըլլալով, դպրոցէն տուն երթալուն պէս « Հայրիկ, լրագիր բերի՞ք » հարցումը կընէ, և երբ բերած ըլլան՝ մեծաւ բերկրութեամբ ծայրէ ի ծայր նոյն թերթը կկարդայ եղեր:

Մեր այս սեղեկութիւնը կհրատարակեմք ի քաղաքութիւն ուսումնասէր Մանիկ օրիորդիկին, և ի նախանձաւորութիւն իւր ընկերուհեաց = Միանդամայն այս առթիւ մեր շնորհակալութիւնները կնուիրեմք մեծապատիւ Մէզպուրեանի՝ իւր վարժարանին բարեկարգ և յառաջագիւմական ընթացից համար:

Իւսկիւտարի Մէլամիյէ թաղի խորհրդոյն կողմանէ ոստիկանութեան ատենին առջև Մամուլ հանդիսին դէմ բացուած դատը երէկ լրանալով, յիշեալ Հանդիսին խմբագիրը միամտեայ բանտարկութեան դատապարտուեր, և երէկ ի գործ գրուեր է այս վճիռն:

Մեր ծանօթներէն շատերը երէկ

երեկոյ ցաւ կյայանէին այս դէպքին վրայ, դիտողութիւն ընելով թէ՛ Սէլամիյէի պատուարժան խորհուրդն աւելի աղէկ ըրած կըլլար եթէ ազգային լրագրաց միջոցաւ ի պաշտօնէ հրատարակէր Մամուլի գրածներուն ստույթները:

Մեք ևս այս ցաւակցութեան և դիտողութեան մասնակցիլ անխոհեմութիւն չեմք համարիր, յուսալով որ կնեւրուի մեզ մեծարդոյ խորհրդոյն կողմանէ:

... Խմբագիր: — Մեծապէս շնորհակալ եմ որ օգոստ. 26 թուականով երկառոյ գրութիւնս հրատարակեցիք: Մեր Պ. Գասպարը իւր խոշոր սուտին վրայ փոխանակ ամենալու Մանգումէի 1016 թուով թերթին մէջ խեղճ ու կրակ պատասխան մը գրելու ելեր է: Գրչի փափուկ ստալարէղը շըրհեղեղէն անմիջապէս վերջը աչրոյ այսպիսի կարեկցութեան արժանի համբախներու մնալուն վրայ շիտակը քիչ մը քիչ չենք ցաւիր: Տկար դրէչ ունենալը ամթ չէ, որովհետև թերեւս օր մը բացուի, բայց ասոր հետ մէկտեղ խոշոր սուտեր շինելը մեծ ամթ ըլլալը չուրացուիր: Մենք « ի դիմաց խմբի երիտասարդաց » ըսելուն վրայ բողոքեր էինք թէ, դիւղիս երիտասարդութիւնը բնաւ սեղեկութիւն չունի այս գործէն, մեր քերթող բարեկամը ամենալը մէկդի դնելով մեղի հարցնելու կեղայ թէ « մէկ գիշերուան մէջ ի՞նչպէս կարող եղաւ բոլոր երիտասարդաց դիտաւորութիւնը հասկնալ », շատ մի դարմանաք բարեկամ, գիշեր մը միջոցն ալ շատ է, գործերն յայտնի են . . . Անունս

խմանալ ուղեր ես, որպէս զի դրած  
 ներուս բառ առ բառ պատասխանես.  
 անիկոց քու գիտնալիք բանդ չէ ես  
 սոյ ըլլամ, ըլլամ, դուն նայէ որ դրած  
 ծիս ուշադրութեամբ պատասխանես  
 Հոգիդ կտիրես Պ. Գասպար, արդէն  
 յարմար առիթ մ'է այս, քեզի բան  
 մը հարցունեմ, այն չէ ան, գրած ոտա  
 նաւորիդ իմաստը կհասկնաս, մանա  
 ւանդ շտկէ շխտակ ստորադրութիւնդ  
 կրնաս դնել, եթէ այս, պատրաստ  
 եմ այժմէն քեզի բարձր մ'ըսել: Գո  
 հաւթիւն Ստուծոյ, անցեալ անգամ  
 ուան «ի դիմաց խմբէ երիտասար  
 դաց» ըլլաւ այս անգամ «ի դիմաց խումբ  
 մը երիտասարդաց» ի իջեր է, կհաս  
 կնաս այս երկուքին մէջ տեղը եզած  
 զգալի տարբերութիւնը: Պ. Գասպար,  
 եթէ կնեցես, բան մ'ալ հարցնեմ, սա  
 խումբ մը երիտասարդ ըսածդ ո՞ր է,  
 որո՞նք են, անուննին կրնաս տալ,  
 կամ թէ կայ մի ատանկ բան մը, և թէ  
 եթէ կայ անոնք ալ քեզի պէս խնդ  
 ուկրակ բաներ ըլլալու են, որոնց այս  
 օրուան օրս թարգման կանգներու  
 պատիւն ունեցած ես: Կ'ազաչեմ եթէ  
 կարելի է, սա մէկ քանի հարցումներ  
 թուս պատասխանելու շնորհ ընէիք,  
 որպէս զի ամենքնիս ալ հանդարտիւք  
 բայց եթէ այս հարցումներու ոչ  
 պատկանող ակեղցքերն բաներ գրես,  
 գիտցած ըլլաս որ բուն խնդիրէն  
 կը շեղիս հեռաւաքար դատող կիր  
 սրնցես: Ընթերցողները չձանձրա  
 ցընեմք:

2 սեպտեմբեր 1869

Պեշիկթաշ

Վահրամ

ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Գոնստիտէն այս առաւօտ 40 րո  
 ռուշ 12 փարայով բացուեցաւ, և ժո  
 մը 2ին 46 դուրուշ 22 փարայ է:

— Լա Թիւրքի կծանուցան թե  
 տեղական թղթատարութիւնը մտաբ  
 պիտի սկսի, կայսերական թղթատա  
 րութեան վերատեսչութեան ներքե

— Կայսերական հինդերորդ բա  
 նակին գլխաւոր քարտուղար Մուս  
 թաֆա Ֆայիգ էֆէնտիին երկրորդ  
 աստիճանի երկրորդ կարգի միւթէ  
 մայիլի պաշտօնատարութիւն արուե  
 ցաւ:

— Կրսուի թէ, իդմիս և շրջակա  
 ներք գտնուող Չէրքէսներուն կող  
 մանէ այս օրերս Բ. Գրան աղերսագիր  
 մը տրուելով, խնդրուեր է որ յանձ  
 նաժողով մը կազմուի իրենց վեճակին  
 քննութեան և կայսերական կառա  
 վարութեան կողմանէ տրուած նպաս  
 տին արդարապէս բաշխման համար:  
 Ստոնց խնդիրն ընդունուի և գան  
 դատանաց վերջ պիտի տրուի եղեր:

— Միւսմէյիդ տաճիկ լրագիրը ճամ  
 բորդներէ իմանալով կգրէ թէ, նա  
 խորդ ամսոյն 24ին չորեքշաբթի օրը  
 երեկոյին ժամը 2ին տտենները Տրա  
 պիզոն երթալու համար մայրաքաղա  
 քէս մեկնող Ֆէվսիտի—Օսմանիյէի  
 Մալազօֆ անուն շողեհուուն հրամա  
 նատարը, շողեհուան 24 ժամու չափ  
 նաւահանգիստ մը կեցուցեր և ինքը  
 լեռներն որսի դացեր է, մինչդեռ օ  
 գը աղէկ է և ուրիշ որևէ արդեւք չը  
 կայ եղեր:

— Հեռագրի մը նայելով, Ռումա  
 նիոյ կարողոս իշխանը երկուշաբթի օ

Վիեննայէն երբր է, Չվիցերի եր-  
պու համար : Աւարիոյ կայսրը ա-  
յլին կարգի Լեոբոլտ պատուանշան  
ընծայեր է իշխանին :

Պաշտօնական վիճակագրութեան  
հրատարակում անկէց երկու տարի յա-  
նայ փոփոխի մէջ բացուած տիեզե-  
րակոն սրուեստահանդէսը տեսնելու  
դաստիարակներուն 59367ը Անգղիայէն,  
48865ը Գերմանիայէն, 446ը Աւսթ-  
րիայէն, 27368ը Պելճիգայէն, 289ը  
Տաճկաստանէն, 4ը Չինաստանէն են  
երբր : 19202 լուսանկար, 4000 կղե-  
րական անձինք, և 320 ալ լրագրա-  
կան խմբագիրք այս պատճառաւ փա-  
րիղ դացեր են :

Պափկերայի պաշտօնեաներէն  
մէկը Լիվաթիա հասնելու մօտ է ե-  
ղեր, ուստաց Աղեկանազր կայսեր և  
կայսրուհւոյն հետ տեսնուելու և  
Պափկերայի թագաւորին ուստաց ար-  
չիդ քսուհւոյ մը հետ ամուսնանալու  
դիտաւորութեան վրայ բանակցելու նը-  
պատակաւ :

Ալիքիկէի մէկ քանի կողմերէն  
և դիտաւորաբար Ամերիկայէն բաղ-  
մաթիւ հրեայք Սայանիա անցնելով,  
սպանիական հպատակութեան ըն-  
դունուելու խնդիր մատուցեր են :

Մէջին իւրիւր


Օսմանեան լեզուին դպրութիւնը  
դիւրաւ սորվելու համար հայերէն և  
տաճկերէն դրերով նոր ոճով շինուած  
քերականութիւն մըն է, ազգային  
վարժարանաց խիստ յարմար : Ամեն  
գրավաճառաց քով կժախուի գին 22  
ղուրուշ, իսկ տասը հատէն աւելի առ-

նողը կրնայ Շահնազար—Նուպարեան  
վարժարանի տաճկերէն դասատու փա-  
շանէ հարիւրին քսան ղեղչելով ըս-  
տանալ Յ. Գ. Գաֆաֆեանի ձեռամբ  
ի Չաղմագճըլար :




Օրթագիւղ թաշ—վերաիվէն Շա-  
հին—օղլու փողոցը Խուրուեան Գաբ-  
րիէլ աղային մեծ տանը քովը 2300  
կանգունի վրայ շինուած տուն մը կայ  
ծախու, մէջը բաւական պարտէզով  
և ծովահայեաց, նաև ջուրի հաստա-  
տուն խաղնայով :

Իվ որ ծախու առնել ուզէ, Գուղ-  
կունճուգի Յունաց եկեղեցւոյն քով  
108 թիւ տունը երթալ ու տեսնելու է  
Խուրուեան Գաբրիէլ աղայն :



Պոնե միւնիստրը, Բընաս Բոր-  
ժաոր և ընտրեաց սիրահար

Այս հանրածանօթ և ընտիր վէպին  
թարգմանութեան ու տպագրութեան  
ձեռք զարնուած է, շարաթը 16ական  
երեօժ բաղկացեալ երկերկու մեծա-  
դիր թերթեր հրատարակելով : Բա-  
ժանորդագրութեան դինն է մէկուկէս  
ործաթ մէճիտ . իսկ զատ թիւ առ-  
նել ուզողը հատին 2 զուրուշ պիտի  
վճարէ : Բաժանորդագրութեան տե-  
ղըն է Պ. Յ. Գավաֆեանի գրատունը,  
և Չորապճի խանին դէմ թիւ 11 վա-  
ճառանոցը :



ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՒ  
Հ. Ս. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԵՒՐԳՃԵԱՆ